600.0315.16.11.16

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2016 թվականի №315Ա
քաղ. Երևան

### «ՆՈՐԱՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ ՆԵՐՍԵՍԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի №ԱԲ-2123Հ գրությունը, որով «ՆՈՐԱՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ ՆԵՐՍԵՍԻ» անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) ծանուցվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1 հոդվածի 2-րդ կետի հիմքով ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման համար հաշվարկված ութ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր դրամ գումարի չափով վճարման պարտավորությունը չկատարելու փաստի ուսումնասիրության նպատակով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 31-ից անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարուցված վարչական վարույթի մասին, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման համար հաշվարկված ութ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր դրամ գումարի վճարման փաստացի կատարումը, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 31-ից անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի 2-րդ կետի խախտման փաստի

ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
16 նոյեմբերի 2016թ.
ժամը 16 ՀՀ